**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 19.06.2026թ.
ժամը 11[40]

**Մասնակցում էին՝**

**Գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՁՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Ա. Ասատրյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՁՏԱ բաժնի ավագ սպա Խ. Երիցյան:

**Բացակայում է՝**

ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՁՏԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ծատրյանը:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Ետոյան:

**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ս.Ետոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Ս.Ետոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ |
| 2 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ |
| 3 | «Տոպազ-95» ՍՊԸ |
| 4 | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ |
| 5 | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ |
| 6 | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ |
| 7 | «ՊԼԱՆԵՏՖԱՅԲԵՐ» ՍՊԸ |
| 8 | «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 9 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ |
| 10 | «ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ» ՍՊԸ |
| 11 | «Միկրոդինգ» ՍՊԸ |
| 12 | «ԷՅԷՄԷՍ» ՍՊԸ |

| | |
|---|---|
| 13 | «Ռեդինետ» ՓԲԸ |
| 14 | «Վետմար» ՍՊԸ |
| 15 | «Հենմարքոմ» ՍՊԸ |
| 16 | «Կոմպասս» ՍՊԸ |
| 17 | «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 18 | «Իքս-Արթ» ՍՊԸ |
| 19 | «ԱՍ Թեքնոլոջիս» ՍՊԸ |
| 20 | «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ |
| 21 | «ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ |
| 22 | «Նեքսթ» ՍՊԸ |
| 23 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Բոլոր Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ-ի հավելված 1.1-ի՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի, «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի հավելված 1-ի՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության, և հավելված 1.1-ի՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի:

2.3 Բոլոր մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ի, «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ-ի, «ՄԱԺԵՎ» ՍՊԸ-ի, «ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ-ի, «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի և «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերի, մասնավորապես՝

«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում՝ 21-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, անխափան սնուցման աղբյուր (UPS)-ի անվանական հզորությունը, ակտիվ հզորությունը, մուտքային լարման միջակայքը, փոխանցման ժամանակը, համալրվող մարտկոցների ունակությունը և մարտկոցների լիցքավորման ժամանակը սույն ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներից ցածր են: Քանի որ առարկայի բնութագիրը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել և ներկայացնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

«ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը: Իսկ հավելված 1-ում՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ, անմիջապես սկզբնամասում սխալ է գրված սույն ընթացակարգի ծածկագիրը, այնուհետև նշված է, որ ընկերությունը ցանկություն ունի մասնակցելու ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ կողմից հայտարարված էլեկտրոնային աճուրդին, հավելված 1-ում նաև բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող ընկերության էլեկտրոնային փոստի հասցեն, իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը և տեղեկատվություն այն մասին, որ «Կից ներկայացվում է ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի»: Ինչպես նաև «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, 1-ին, 5-ից-8-րդ, 47-րդ և 49-րդ չափաբաժինների մասով բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող գնման առարկայի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը:

«ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, 35-րդ չափաբաժնի մասով բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող գնման առարկայի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը:

«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը:

«ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, բացակայում է գնման առարկայի ամբողջական նկարագիրը՝ տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև լրացված և հաստատված չեն լրացման ենթակա համապատասխան դաշտերը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 19.06.2026թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: 23.06.2026թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Քանի որ «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված **հավելված N 2-ում՝** գնային առաջարկում, 34-րդ և 37-րդ չափաբաժիններում գնման առարկայի անվանումները սխալ էին գրված, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց այդ չափաբաժինների մասով մերժել Մասնակցի հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները և սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետը՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ինչպես նաև, գնահատող հանձնաժողովը որոշեց բոլոր չափաբաժինների մասով մերժել «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված **հավելված N 2-ը՝** գնային առաջարկը, հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը (Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:), սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետը (բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան) և 8.9 կետով սահմանված դեպքը:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը չանդրադարձավ «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (34-րդ և 37-րդ չափաբաժինների մասով) և «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (բոլոր չափաբաժինների մասով) ներկայացված հայտերում ներառված մյուս փաստաթղթերի գնահատմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

### 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

---

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 23 մասնակիցներ.

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | չ/մ | Քանակը | Գնման գինը /ՀՀ դրամ/ | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումները | գնային առաջարկները /ՀՀ դրամ/ | | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր գինը |
| 1 | մարտկոցների լիցքավորիչներ (Հիբրիդային լիցքավորման սարք) | հատ | 350 | 24,150,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 19,915,000 | 3,983,000 | 23,898,000 |
| | | | | | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ | 19,687,500 | 3,937,500 | 23,625,000 |
| | | | | | «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 20,125,000 | 4,025,000 | 24,150,000 |
| 2 | հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ 100 աբոնենտ) | հատ | 15 | 14,400,000 | «ԱՍ Թեքնոլոջիս» ՍՊԸ | 11,925,000 | 2,385,000 | 14,310,000 |
| 3 | ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (Հեռախոսային ապարատ SIP) | հատ | 200 | 14,912,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 15,000,000 | 3,000,000 | 18,000,000 |
| | | | | | «Ռեդինետ» ՓԲԸ | 12,426,600 | 2,485,320 | 14,911,920 |
| 4 | սնուցման աղբյուրների փոխակերպիչներ (Հոսանքի փոխակերպիչ 12-220 1500Վտ) | հատ | 367 | 4,587,500 | «Վետմար» ՍՊԸ | 3,638,805 | 727,761 | 4,366,566 |
| 5 | կոմուտացիոն սարք (Խտացուցիչ սարք PCM-30) | հատ | 70 | 19,320,000 | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | 15,995,000 | 3,199,000 | 19,194,000 |
| | | | | | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ | 12,827,500 | 2,565,500 | 15,393,000 |
| | | | | | «Ռեդինետ» ՓԲԸ | 16,100,000 | 3,220,000 | 19,320,000 |
| 6 | կոմուտացիոն սարք (Խտացուցիչ սարք PCM-30) | հատ | 50 | 15,750,000 | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | 12,777,500 | 2,555,500 | 15,333,000 |
| | | | | | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ | 10,362,500 | 2,072,500 | 12,435,000 |
| | | | | | «Ռեդինետ» ՓԲԸ | 13,125,000 | 2,625,000 | 15,750,000 |
| 7 | միաֆազ շարժիչներ (Էլեկտրոագրեգատ ԱԲ-4) | հատ | 82 | 12,693,600 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 10,516,500 | 2,103,300 | 12,619,800 |
| | | | | | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | 10,233,600 | 2,046,720 | 12,280,320 |
| | | | | | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ | 10,455,000 | 2,091,000 | 12,546,000 |
| 8 | սնուցման բլոկ (Սնուցման բլոկ DM-330MV 13,8 Վ, 30Ա) | հատ | 60 | 2,988,000 | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | 2,427,000 | 485,400 | 2,912,400 |
| | | | | | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ | 2,250,000 | 450,000 | 2,700,000 |
| | | | | | «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 2,415,300 | 483,060 | 2,898,360 |
| | | | | | «Հենմարքոմ» ՍՊԸ | 2,400,000 | 480,000 | 2,880,000 |
| | | | | | «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 2,988,000 | 0 | 2,988,000 |
| 9 | ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք Ցցային 390-460 Մhց) | հատ | 30 | 1,422,000 | «Հենմարքոմ» ՍՊԸ | 1,170,000 | 234,000 | 1,404,000 |
| 10 | ալեհավաքներ և արտացոլիչներ | հատ | 30 | 1,422,000 | «Հենմարքոմ» ՍՊԸ | 1,170,000 | 234,000 | 1,404,000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Ալեհավաք Ցցային 130-180 Մհց) | | | | | | |
| 11 | ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք) | հատ | 100 | 9,500,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 7,500,000 | 1,500,000 | 9,000,000 |
| | | | | | «Տոպազ-95» ՍՊԸ | 5,432,500 | 1,086,500 | 6,519,000 |
| | | | | | «Միկրորինգ» ՍՊԸ | 6,382,500 | 1,276,500 | 7,659,000 |
| | | | | | «ԷՅԷՄԷՍ» ՍՊԸ | 5,866,000 | 1,173,200 | 7,039,200 |
| 12 | Մոդեմներ (Մոդեմ 5ԳՀց outdoor modem 25dbi antenna) | հատ | 10 | 648,000 | | 0 | 0 | |
| 13 | Մոդեմներ (RBwAPR-2nD&R11e-LTE WAP LTE KIT 3G modem/ wAPR-2nD&EC200A-EU) | հատ | 367 | 15,414,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 12,845,000 | 2,569,000 | 15,414,000 |
| | | | | | «Տոպազ-95» ՍՊԸ | 11,010,000 | 2,202,000 | 13,212,000 |
| | | | | | «Միկրորինգ» ՍՊԸ | 11,710,970 | 2,342,194 | 14,053,164 |
| | | | | | «ԷՅԷՄԷՍ» ՍՊԸ | 11,866,000 | 2,373,200 | 14,239,200 |
| | | | | | «Իքս-Արթ» ՍՊԸ | 12,661,500 | 2,532,300 | 15,193,800 |
| 14 | ցանցային բաժանարար (Սվիչ Switch 8 Port) | հատ | 120 | 396,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 750,000 | 150,000 | 900,000 |
| | | | | | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 240,000 | 48,000 | 288,000 |
| | | | | | «Տոպազ-95» ՍՊԸ | 285,000 | 57,000 | 342,000 |
| | | | | | «ՊԼԱՆԵՏՖԱՅԲԵՐ» ՍՊԸ | 324,167 | 64,833 | 389,000 |
| | | | | | «Վետմար» ՍՊԸ | 265,000 | 53,000 | 318,000 |
| 15 | դյուրակիր համակարգիչներ (Համակարգիչ Notebook i3) | հատ | 80 | 21,096,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 17,540,000 | 3,508,000 | 21,048,000 |
| | | | | | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 17,037,500 | 3,407,500 | 20,445,000 |
| | | | | | «ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ» ՍՊԸ | 16,701,000 | 3,340,200 | 20,041,200 |
| 16 | սեղանի համակարգիչներ (Մոնտաժային համակարգիչ) | հատ | 4 | 4,800,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 9,250,000 | 1,850,000 | 11,100,000 |
| | | | | | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 3,800,000 | 760,000 | 4,560,000 |
| | | | | | «ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ» ՍՊԸ | 3,800,000 | 760,000 | 4,560,000 |
| 17 | սեղանի համակարգիչներ (Համակարգիչ i9) | հատ | 9 | 16,740,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 13,455,000 | 2,691,000 | 16,146,000 |
| | | | | | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 13,537,500 | 2,707,500 | 16,245,000 |
| | | | | | «ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ» ՍՊԸ | 13,252,500 | 2,650,500 | 15,903,000 |
| 18 | սեղանի համակարգիչներ (Համակարգիչ i3) | հատ | 80 | 21,984,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 28,000,000 | 5,600,000 | 33,600,000 |
| | | | | | «ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ» ՍՊԸ | 17,404,000 | 3,480,800 | 20,884,800 |
| 19 | սեղանի համակարգիչներ (Համակարգիչ Intel Core i7) | հատ | 20 | 7,998,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 11,700,000 | 2,340,000 | 14,040,000 |
| | | | | | «ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ» ՍՊԸ | 6,665,000 | 1,333,000 | 7,998,000 |
| 20 | համակարգչային մոնիտոր (համակարգչային մոնիտոր LCD տիպի 23.6") | հատ | 80 | 3,259,200 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 2,712,000 | 542,400 | 3,254,400 |
| | | | | | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 2,080,000 | 416,000 | 2,496,000 |
| 21 | անխափան սնուցման աղբյուրներ (UPS սնուցող սարք 1500VA) | հատ | 120 | 7,560,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 2,844,000 | 568,800 | 3,412,800 |
| | | | | | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ | 5,975,200 | 1,195,040 | 7,170,240 |
| | | | | | «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 5,985,000 | 1,197,000 | 7,182,000 |
| | | | | | «Կոմպասս» ՍՊԸ | 5,070,000 | 1,014,000 | 6,084,000 |
| 22 | անխափան սնուցման աղբյուրներ (UPS սնուցող սարք 1200VA) | հատ | 50 | 2,370,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 980,000 | 196,000 | 1,176,000 |
| | | | | | «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 1,935,500 | 387,100 | 2,322,600 |
| | | | | | «Կոմպասս» ՍՊԸ | 1,750,000 | 350,000 | 2,100,000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | անխափան սնուցման աղբյուրներ (UPS սնուցող սարք 1000VA) | հատ | 40 | 1,548,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 784,000 | 156,800 | 940,800 |
| | | | | | «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 1,290,000 | 258,000 | 1,548,000 |
| | | | | | «Կոմպասս» ՍՊԸ | 1,290,000 | 258,000 | 1,548,000 |
| 24 | տեսակոնֆերանսի սարքեր (Վիդեոտվյալների պահպանման սերվերներ) | հատ | 1 | 16,860,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 14,030,000 | 2,806,000 | 16,836,000 |
| 25 | գունավոր տեսամոնիտորներ (Մոնիտոր 32 դույմ) | հատ | 205 | 17,097,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 12,710,000 | 2,542,000 | 15,252,000 |
| | | | | | «Տոպազ-95» ՍՊԸ | 13,940,000 | 2,788,000 | 16,728,000 |
| | | | | | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ | 11,600,000 | 2,320,000 | 13,920,000 |
| 26 | գունավոր տեսամոնիտորներ (Մոնիտոր 43 " HDMI մալուխով) | հատ | 120 | 11,030,400 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 9,187,500 | 1,837,500 | 11,025,000 |
| | | | | | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ | 8,624,000 | 1,724,800 | 10,348,800 |
| 27 | գունավոր տեսամոնիտորներ (Տեսապատի մոնիտոր 46" HDMI-15M մալուխով, կախիչով) | հատ | 10 | 4,380,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 3,180,000 | 636,000 | 3,816,000 |
| 28 | գունավոր տեսամոնիտորներ (Մոնիտոր 22 " 12v) | հատ | 300 | 9,594,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 10,170,000 | 2,034,000 | 12,204,000 |
| | | | | | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 6,360,000 | 1,272,000 | 7,632,000 |
| 29 | տվյալների անվտանգության համակարգչային ծրագրային փաթեթներ (Ծրագրային փաթեթ WEB, Mail SSL) | հատ | 1 | 325,000 | | 0 | 0 | |
| 30 | անվտանգության տեսախցիկներ (Տեսախցիկ դրսի գիշեր-ցերեկ IP 8mp վարիֆոկալ) | հատ | 20 | 1,320,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 600,000 | 120,000 | 720,000 |
| 31 | անվտանգության տեսախցիկներ (Տեսախցիկ 4 Մպ) | հատ | 60 | 1,476,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 1,090,000 | 218,000 | 1,308,000 |
| | | | | | «ՊԼԱՆԵՏՖԱՅԲԵՐ» ՍՊԸ | 1,163,333 | 232,667 | 1,396,000 |
| | | | | | «ԱՅՅԱ ՍԵՔ» ՍՊԸ | 1,075,000 | 215,000 | 1,290,000 |
| 32 | բաշխիչ ցանցի փոխակերպիչ (Հեռախոսային անցախուց 24-տեղանոց) | հատ | 10 | 2,178,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 1,783,250 | 356,650 | 2,139,900 |
| 33 | էլեկտրական պարամետրերի չափման գործիքներ (LAN ցանցի ստուգման հավաքածու) | հատ | 50 | 575,000 | «Վետմար» ՍՊԸ | 425,000 | 85,000 | 510,000 |
| 34 | Էլեկտրականության պարամետրերի չափման սարքեր (CCTV IP տեստեր) | հատ | 30 | 3,720,000 | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | 3,097,500 | 619,500 | 3,717,000 |
| | | | | | «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 3,720,000 | 0 | 3,720,000 |
| 35 | եռակցման սարքեր (Օպտիկական | հատ | 10 | 5,000,000 | «ՊԼԱՆԵՏՖԱՅԲԵՐ» ՍՊԸ | 4,158,333 | 831,667 | 4,990,000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գործող սարք իր բոլոր կից գործիքներով) | | | | «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 3,925,000 | 785,000 | 4,710,000 |
| | | | | | «ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ | 3,740,000 | 748,000 | 4,488,000 |
| 36 | բաշխիչ ցանցի փոխակերպիչ (Սվիչ POE -8 port) | հատ | 300 | 10,440,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 6,900,000 | 1,380,000 | 8,280,000 |
| | | | | | «Տոպազ-95» ՍՊԸ | 8,500,000 | 1,700,000 | 10,200,000 |
| | | | | | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ | 8,530,000 | 1,706,000 | 10,236,000 |
| 37 | բաշխիչ ցանցի փոխակերպիչ (Հեռախոսային անցախուց 8-տեղանոց) | հատ | 128 | 6,652,800 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 5,164,800 | 1,032,960 | 6,197,760 |
| | | | | | «Տոպազ-95» ՍՊԸ | 4,896,000 | 979,200 | 5,875,200 |
| | | | | | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | 5,382,400 | 1,076,480 | 6,458,880 |
| | | | | | «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 6,652,800 | 0 | 6,652,800 |
| 38 | ցանցային բաժանարար (Սվիչ MIKROTIK CRS-3011 / L009UI-GS) | հատ | 500 | 24,900,000 | «Տոպազ-95» ՍՊԸ | 17,750,000 | 3,550,000 | 21,300,000 |
| | | | | | «Միկրոթինգ» ՍՊԸ | 18,728,750 | 3,745,750 | 22,474,500 |
| | | | | | «ԷՅԷՄԷՍ» ՍՊԸ | 20,416,000 | 4,083,200 | 24,499,200 |
| | | | | | «Իքս-Արթ» ՍՊԸ | 20,250,000 | 4,050,000 | 24,300,000 |
| 39 | ցանցային բաժանարար (Սվիչ MIKROTIK CRS-4011) | հատ | 200 | 17,840,000 | «Տոպազ-95» ՍՊԸ | 13,080,000 | 2,616,000 | 15,696,000 |
| | | | | | «Միկրոթինգ» ՍՊԸ | 13,766,500 | 2,753,300 | 16,519,800 |
| | | | | | «ԷՅԷՄԷՍ» ՍՊԸ | 14,116,000 | 2,823,200 | 16,939,200 |
| | | | | | «Իքս-Արթ» ՍՊԸ | 15,487,500 | 3,097,500 | 18,585,000 |
| 40 | ցանցային բաժանարար (Օպտիկական սվիչ 8 պորտ 1GB) | հատ | 120 | 6,120,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 5,100,000 | 1,020,000 | 6,120,000 |
| 41 | ձայնագրող սարքեր (Տեսաձայնագրիչ NVR-16 port) | հատ | 165 | 11,880,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 24,750,000 | 4,950,000 | 29,700,000 |
| | | | | | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ | 8,596,080 | 1,719,216 | 10,315,296 |
| 42 | ձայնագրող սարքեր (Տեսաձայնագրիչ NVR-32 port) | հատ | 98 | 13,524,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 20,580,000 | 4,116,000 | 24,696,000 |
| | | | | | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ | 8,200,000 | 1,640,000 | 9,840,000 |
| 43 | ձայնագրող սարքեր (Տեսաձայնագրիչ NVR-64 port) | հատ | 35 | 11,760,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 14,525,000 | 2,905,000 | 17,430,000 |
| | | | | | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ | 8,100,000 | 1,620,000 | 9,720,000 |
| 44 | մալուխների բաշխման պահարան (Բաշխման արկղ 6U) | հատ | 20 | 600,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 485,000 | 97,000 | 582,000 |
| | | | | | «ՊԼԱՆԵՏՖԱՅԲԵՐ» ՍՊԸ | 500,000 | 100,000 | 600,000 |
| 45 | մալուխների բաշխման պահարան (Բաշխման արկղ 9U) | հատ | 39 | 1,170,000 | «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ | 955,500 | 191,100 | 1,146,600 |
| | | | | | «ՊԼԱՆԵՏՖԱՅԲԵՐ» ՍՊԸ | 975,000 | 195,000 | 1,170,000 |
| 46 | մալուխների բաշխման պահարան (Բաշխման արկղ 12U) | հատ | 30 | 960,000 | | 0 | 0 | |
| 47 | ցանցային բաժանարար (Ղեկավարվող ցանցային բաժանարար) | հատ | 200 | 9,000,000 | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ | 6,625,000 | 1,325,000 | 7,950,000 |
| | | | | | «ՊԼԱՆԵՏՖԱՅԲԵՐ» ՍՊԸ | 7,491,667 | 1,498,333 | 8,990,000 |
| | | | | | «Տենդեր Գրուպ» ՍՊԸ | 7,065,000 | 1,413,000 | 8,478,000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 48 | արկղեր (Հերմետիկ տուփ 40*30*20սմ) | հատ | 1 250 | 9,700,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 6,925,000 | 1,385,000 | 8,310,000 |
| | | | | | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 7,870,000 | 1,574,000 | 9,444,000 |
| | | | | | «Նեքսթ» ՍՊԸ | 6,844,445 | 1,368,889 | 8,213,334 |
| | | | | | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 7,500,000 | 1,500,000 | 9,000,000 |
| 49 | միաֆազ շարժիչներ (Բենզոագրեգատ ԱԲ-2) | հատ | 200 | 18,120,000 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 13,590,000 | 2,718,000 | 16,308,000 |
| | | | | | «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ | 13,900,000 | 2,780,000 | 16,680,000 |
| | | | | | «ՄԱԺԵՎ» ՍՊԸ | 14,800,000 | 2,960,000 | 17,760,000 |
| | | | | | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 13,705,000 | 2,741,000 | 16,446,000 |

Ըստ ներկայացված փաստաթղթերի՝ «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով առաջարկված նվազագույն գները հավասար են, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, 23.06.2026թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով **26.06.2026թ. ժամը 11:30**-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Սակայն այդ բանակցություններին Մասնակիցներից ոչ մեկը չներկայացավ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.**

---

(Ս. Եսոյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 29.06.2026թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 47-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ՄԱԺԵՎ» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնի մասով՝ «ԱՍ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ն, 3-րդ չափաբաժնի մասով՝ «Ռեդինետ» ՓԲԸ-ն, 4-րդ և 33-րդ չափաբաժինների մասով՝ «Վետմար» ՍՊԸ-ն, 7-րդ և 34-րդ չափաբաժինների մասով՝ «ՊՐԵՄԻՈՒՄ ԼԵԴ» ՍՊԸ-ն, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով՝ «Հենմարքոմ» ՍՊԸ-ն, 11-րդ, 13-րդ և 37-ից-39-րդ չափաբաժինների մասով՝ «Տոպազ-95» ՍՊԸ-ն, 14-րդ, 20-ից-24-րդ, 27-րդ, 28-րդ, 30-րդ, 36-րդ, 44-րդ և 45-րդ չափաբաժինների մասով՝ «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ն, 15-րդ և 17-ից-19-րդ չափաբաժինների մասով՝ «ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ» ՍՊԸ-ն, 25-րդ, 26-րդ և 41-ից-43-րդ չափաբաժինների մասով՝ «Տենդեր Գրուպ» ՍՊԸ-ն, 31-րդ չափաբաժնի մասով՝ «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ-ն, 32-րդ, 40-րդ և 49-րդ չափաբաժինների մասով՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, 35-րդ չափաբաժնի մասով՝ «ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ-ն, իսկ 48-րդ չափաբաժնի մասով՝ «Նեքսթ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

4.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգը գնահատող հանձնաժողովը որոշեց 12-րդ, 29-րդ և 46-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 16-րդ չափաբաժինը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

---------------------------------------------------------------------------------------------------------------

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Ասատրյան

Գնահատող Խ. Երիցյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան